


**Արհեստից ճիշդ
ուսուցման ջեներո**

**ԿԵՆՏՐԱԼ ԿՍՏԱՆՈՒԹՅԱՆ
ՎԿԱՅԱԿԻԱՆՆԵՐ ԲՐ - ԲԼ
ԴՏ - ՀՏ ՄԱԳԻՍՏՐԱՆ և
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՔԱԾԻՈՒՄ**

**ՏՈՐԱ, ՏՈՐԱՅԻ ԲՈՂՈՐԱ
ԲԵՆ. 894308, 894237:**

ՏՈՄՍԱԿ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ...

«Աւելի լաւ է հայերէնով բրբաբարով երգ լսել, քան՝ բրբբրէն երգերու գերին զառնալ. գոնէ հայերէն բառեր կը լսենք»։ Այսպէս արտայայտուեցաւ բարեկամս, երբ վերջերս միասնաբար ներկայ գտնուեցանք յեղափոխական երգերու մեկնաբանի մը ելույթին, ուր ան երգերը կը մատուցէր բրբաբարով ոճով մը։ Բարեկամս տուած պատասխանին հիմնականն ու պատճառը իրարմէ տարբեր էին երեւութապէս. բայց անոնք ունէին նույն խորքը՝ հրապարակի վրայ խնկական հայ երգը մեկնաբանելու ատակ ինստ սակաւաբիւ երգիչներու երեւոյթը. որ ձեւով մը կ'արգարացըներ միւսները, բեմը սանձաճաճակօրէն շահագործողներուն ներկայութիւնը։ Մանաւանդ յեղափոխական երգը, որ իր նկարագիրով, գլմագլծով, կառուցով, մթնոլորտով ու խորքով կը տարբերի երգերու միւս բոլոր սեռերէն։ Անկիւկան կացութեան մը, լոմա՝ յեղափոխական-ազգային զգացումներու թարգմանն է սերունդներու բերնին ու ակնկններուն մէջ։ Անոնք յեղափոխական երգը կ'երգեն ու անոր իւրաքանչիւր բառին հետ կ'արտաբերուի։ Կեանք կը ստանայ հերոսական գրուագ մը, հայրենասիրութեան ուսանելի օրինակ մը, կ'ուրազծուի հերոսի մը պայծառ կերպարը։ Յա տկապէս յեղափոխական երգը կարելի չէ աղաւաղել՝ զայն արդիականացնելու պատրուակին տակ դիմափոխելով։

Յեղափոխական երգի հարազատ մեկնաբանութեան լաւագոյն արտայայտութիւնը մենք տեսանք հիւսիսաւային Արցախի բնօրրաններէն Գետաշէնի գրաման օրերուն, երբ հայրենի արուեստագետ մը Լիբանանի մէջ առաջին անգամ ըլլալով մեկնաբանեց «Գետաշէն» երգը։ Ինչ ընդլզում ու իր հողին տէր կանգնելու վճռականութիւն կարարութետագէտին մեկնաբանութեան մէջ։ Ան ամէն անգամ որ կը հնչեցնէր «Դու կաս ու կը մնաս ամբողջ Գետաշէն» նախադասութիւնը, կը զգայիր, որ Գետաշէնը կարենի չէր օտարացնել, գերել։

Օրերը սահեցան, «Գետաշէն»ը մտաւ բազմաթիւ երգիչներու երգացանկին մէջ. եւ իւրաքանչիւրը անոր տուաւ «վրձինի» հարուած» մը՝ զայն վերածելով անդիմագիծ, խորքէ զուրկ, կարծեք... իւրախճանքային երգի մը, որուն ի յուր՝ ունկնդրողը ծափեց ու ծափեց, առանց անգրագումաւու, որ ինչ պատգամ ուներ անկիւ։

Քանի մը տարիներէ պիտի թեւակոխենք Չորդ դարը եւ բնականաբար, անտրամաբանական է, որ ինչպէս բոլոր մարդերուն մէջ, նաեւ երգարուեստին մէջ ժամանակակից բոլոր մէթրոները կ'իրարկելու քայլեր չառնուին։ Բայց կայ խորքը, որ անաղարտ պիտի պահուի։ Զայն դիմափոխելու ոչ կարիքը եւ ոչ անպիտքը կայ։ Վկայ հարազատ մեկնաբանութիւններու ընթացքին ունկնդիրներու ընկալման տարր-դուրսընք։

ԱՐՄԷՆ ԱՐԱՆԵԱՆ

ՔԱՆԱՏԱՅԱՅ ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԷՆ

Վերջերս Հայ Դատի Քանադայի յանձնախումբին ներկայացուցիչներ մասնակցեցան Քեպէկի նահանգային Ազատական երեսփոխան Ֆաթիմա Հուտա Փեփինի կազմակերպած նախաճաշին։ Զեռնարկի գեկուցարներն էր դաշնակցային երեսփոխան եւ Միջազգային Համագործակցութեան նախարար Փիեռ Փեթիկըրու (այժմ մարդու իրաւաբան)։ Ան իր խօսքին մէջ կարեւորեց քա-նադայի միասնականութիւնը՝ յատկապէս չեչտելով քա-նադայի դերը միջազգային գետնի վրայ։

Միւս կողմէ, Հայ Դատի Քանադայի յանձնախումբ-րէն, ՀՕՄի «Սօս» մասնաճիւղի վարչութեան, ինչպէս նաեւ Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Հոգարարձութենէն ներկայացուցիչներ մասնակցեցան, Սէն Լորան-Քարթի-եւի ընտրաշրջանի Ազատական կուսակցութեան վարչութեան եւ միջկառավարական հարցերու նախարար Սթեֆան Տիտի կազմակերպած հանգանակութեան ձեւ-նարկին։ Օրուան պատուոյ հիւրն ու խօսնակն էր Սէն Լէոնար ընտրաշրջանի երեսփոխան Ալֆոնս Կակիյա-նս։ Հայ Դատի յանձնախումբերու ներկայացուցիչները այս առիթով երեսփոխանին հետ արծարծեցին հայ գա-ղութր շահագրգռող կարգ մը հարցեր, գլխաւորաբար՝ 1915ի Հայկական Յեղապաւնութեան առնչուող։

Երեքշաբթի, Հոկտեմբեր 1ի առաւօտեան, Հայ Դատի Քանադայի յանձնախումբին գործավարը ներկայ գտնուեցաւ Սէն Տենի ընտրաշրջանի դաշնակցային երեսփո-խան Էլիենի Պաքփանոսի կազմակերպած նախաճաշի հաւաքին։ Օրուան պատուոյ հիւրն ու թորոնթոյի Տան Վայլի Իսթ ընտրաշրջանի երեսփոխան եւ նախարար Փե-թիկըրու խորհրդարանական քարտուղար Ճան Կատֆրի, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ Քանադա-յի միասնականութեան եւ համագործակցութեան կա-րեւորութեան։

Իսկ նոյն երեկոյեան, Հայ Դատի Քանադայի յանձ-նախումբին ներկայացուցիչներ մասնակցեցան Փիեռ-Փիեռ - Տոյար ընտրաշրջանի դաշնակցային երեսփոխան Պեռնար Փաթրիի կազմակերպած հանգանակութեան ձեւ-նարկին։ Օրուան գեկուցարներն էր մարդու իրա-ւաբար Տակլրս Եանկ, (այժմ՝ Քանադայի պաշտպա-նութեան նախարար)։ Հայ Դատի յանձնախումբերու ներկայացուցիչները մտերմիկ խօսակցութիւն ունեցան պրն. նախարարին, ինչպէս նաեւ՝ երեսփոխան Փաթրիի հետ։ Արծարծուեցան Քանադայի հայ գաղութր շա-հագրգռող կարգ մը հարցեր։ Ընդունելութեան ներկայ էին նաեւ դաշնակցային երեսփոխան Ռուպի Պերթրան, նահանգային նախկին երեսփոխաններ Լուիզ Ռուպի եւ Ճան Օ'Կայաֆր, ինչպէս նաեւ՝ Սէն ժեռըրէն, Ռաքս-պորոյի եւ Իյ Պիպարի քաղաքագետները։

ԻՐ ՏԵՐԸ ԱՐԴԱՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԻ ԸԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԼԵՑՈՒՆ ԵՆՈՅԹԸ ԲՈԼՈՄՊԻԱ ԸԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Լեւոն Տէր Պետրոսեանի աւագ խորհրդական Ժիրայր Լիպարիտեան այժմ նաեւ «պաշտպան փաստաբան» է. Ժողովրդավարութիւնը ոտնակո-խած Հայաստանի ներկայ վարչախումբին։ Լիպարիտեանի արդարացումները եւ մեկնաբանութիւն-ները, որոնք պիտի կարդաք վարի տողերուն մէջ, ունին ծիծաղելի րափանցիկութիւն մը, որուն ետին կը աւսնուի ճգնամամի մատնուած ըմբատլը մը՝ շրջապատուած իր շողոքորթներով։

Հայաստանի վերջին քա-ղաքական ընդլզումները Հոկտեմբեր 3ի երեկոյեան փոխադրուեցան Նիւ Եորքի Քոյոմպիա համալսա-րան, ուր Հ.Զ. Նախագահի աւագ խորհրդական Ժի-րայր Լիպարիտեան ելոյթ ունեցաւ «Հայաստան եւ Չորդ դարու մարտահրա-ւերները» խորագրով դա-սախօսութեամբ մը։ Լար-ուած միջոյրում մը կը տի-րէր դասախօսութեան ողջ տեւողութեան, որ քանի մը առիթներով ընդ միջուեցաւ գայրացած ներկաներու ըողոքի ելոյթներով։

Լիպարիտեանի դասա-խօսութիւնը կ'հովանաւո-րէր Քոյոմպիա համալսա-րանի Հայկական կեդրոնը։ Փոքր սրահին մէջ հաւաք-ւած էին 120ի մօտ հանդի-սականներ։ Բացառյալ էր նաեւ համագետով կամ առանց համագետի ա-պահովութեան ուժերու ներկայութիւնը սրահէն ներս։

Օրուան բանախօսը ներկայացուց Հայկական կեդրոնի առեւտպետ՝ Մայրըր Յարութիւնեան։ Դասախօսութիւնը տե-ւեց մօտ 40 վայրկեան։ Լի-պարիտեան իր խօսքը սկը-

գած եւ միայն փոքր յա-ռաջադացքներու, եւ թէ՛ «բարդ յուճում մը կարելի չէ տալ ակնին»։ Նոյն ծիրէն ներս ան յատուկ կերպով կանգ առաւ նաւթի ուղի-ներուն հարցին վրայ՝ յայտնելով, որ Հայաստա-նի համար տնտեսապէս չատօգտակար պիտի ըլլայ նաւթատար խողովակնե-րու ուղին իր հողերէն տա-րանցումը, սակայն անմի-ջապէս չեչտեց, թէ նման կարգադրութիւն մը պէտք չէ պայմանաւորուի Հարա-րադի հարցով, որովհետեւ «Հարադար ծածու չէ»։

Արտաքին քաղաքակա-նութեան ծիրէն ներս Լի-պարիտեան հին պատմու-թիւն մը նոր ձեւով ներկա-յացնելու գնով յայտնեց, թէ Հայաստանի կառավա-րութիւնը կը փորձէ ընա-կանտն յարաբերութիւններ մշակել իր հարեաններուն հետ։ Ան յատկապէս անդ-րադարձաւ թուրքոյի հետ յարաբերութիւններուն, յայտնելով, որ թէ՛ եւ տա-կաւին այդ յարաբերու-թիւնները վերջնականա-պէս ընկանտն հուսնի մէջ՝ չեն մտած, սակայն երկխո-սութիւններու միջոցով կարելի եղած է «հանխել

Սեպտեմբերի իրադար-ձութիւնները «անկանխա-տեսելի» որակելով՝ Լիպա-րիտեան սկսաւ րադդատա-կաններ ընել։ Հ. Տէր Պետ-րոսեանի եւ ընդլզմու-թեան թեկնածու Վազգէն Մանուկեանի միջեւ խօսե-լով ընտրութիւններու ար-դիւնքներուն մասին՝ Լի-պարիտեան խուսափեցաւ անդրադառնալու ընդլզի-մութեան, օտար ղէտերու եւ օտար մամուլին կողմէ ներկայացուած օրէնքի կերպարաններուն։ Փոխա-րէնը, ան յայտնեց, թէ Հա-յաստանի Գերագոյն Դա-տարանի միջոցով կարելի էր վերատեսութեան են-թարկել ընտրութիւննե-րուն արդիւնքները, սա-կայն Մանուկեան այդ օրի-նական միջոցներուն չդի-մեց։ «Ժողովրդավարութե-ան ճանապարհը դըժ-ւար է, բայց օրէնքները հոն ներկայ են անպայման, որոնք կ'ուզեն օգտագոր-ծել զանոնք», յայտնեց դա-սախօսը։

Ապա Լիպարիտեան խիստ ոճով մը յայտնեց, թէ ընտրութիւններէն ետք յա-ռաջացած ժողովրդային ըողոքը կ'պ չուէր ընտ-րութիւններուն արդիւնք-ներուն հարցին հետ, այլ անիկա ուղղակի արդիւնքն էր խուժարարներու ճիգե-րուն, որոնք կ'ուզէին իշ-խանութեան տիրանալ։ Լի-պարիտեանի համաձայն, Սեպտեմբեր 25ին Ազգային Ժողովի չէնքին դիմաց կա-յացած ցոյցին ընթացքին ներկայ եղած են միայն 10-15 հազար ցուցարարներ,

որուն ընթացքին ցուցա-րարները խոչտանգած են Բարգէն Արարքեանը։ Լի-պարիտեան նաեւ փոխա-նցեց ցուցարարներուն կող-մէ գործադրուած առե-ւանգումի եւ պատանդ վերցնելու գործողութիւն-ներու ձեւաբանութեան վեր-նէր։ Ան յայտնեց, թէ ընտրութիւնները կայա-ցան ըստ սահմանադրա-կան կանոններուն եւ կեդ-րոնական Ընտրական Յանձնաժողովին կողմէ մշակուած օրէնքներուն։ Ան նաեւ չեչտեց, թէ բոլոր թեքու արդար հաւասարա-կչուութեան։ Ան նաեւ չեչ-տեղ դրաւ բազմակուսակ-ցական դրութեան վրայ՝ յայտարարելով, որ Հայաս-տանի մէջ այսօր կը գոր-ծեն 60է ավելի կուսակցու-թիւններ, ներառեալ նախ-կին խորհրդային Միութե-նէն ժառանգ կուսակցու-թիւններն ու Սփիւռքի կու-սակցութիւնները։

Դարձեալ կեդրոնաւա-րով քաղաքական կուսակ-ցութիւններու նիւթին վը-րայ՝ Լիպարիտեան յայտ-նեց, թէ Հայաստանի մէջ յասօր գործող որեւէ կու-սակցութիւն պէտք է պա-տասխան տայ երկու հիմ-նական հարցերու։

1.- Ի՞նչ է կուսակցու-թեան տեսլականը։

2.- Ի՞նչ պիտի ըլլայ կու-սակցութեան գործնական մօտեցումը անմիջկան հարցերու նկատմամբ։

Ան յատուկ ակնարկու-թիւն մը ըրաւ նաեւ ժամա-նակավրէյ դարձած քա-ղաքական ուժերու մասին, յայտնելով «Անոնք, որոնք ղէպբերու այս արագ ըն-թացքին կը պատասխանեն անցեալէն մնացած անդրա-դարձումներով, դատա-պարտուած են նահանջի մէջ մնալու»։

Անդրադառնալով Հա-րարադեան հիմնահարցին՝ Լիպարիտեան յայտնեց, թէ կողմերու միջեւ տարուող բանակցութիւնները յան-

տրամադրութիւններու հրահրումը»։

Դասախօսութեան բուն նիւթին պաշտօնական ներ-կայացումէն ետք Լիպա-րիտեան իր խօսքը կեդրո-նացուց նախագահական վերջին ընտրութիւններուն շուրջ։ Ան յայտնեց, թէ ընտրութիւնները կայա-ցան ըստ սահմանադրա-կան կանոններուն եւ կեդ-րոնական Ընտրական Յանձնաժողովին կողմէ մշակուած օրէնքներուն։ Ան նաեւ չեչտեց, թէ բոլոր թեքու արդար հաւասարա-կչուութեան։ Ան նաեւ չեչ-տեղ դրաւ բազմակուսակ-ցական դրութեան վրայ՝ յայտարարելով, որ Հայաս-տանի մէջ այսօր կը գոր-ծեն 60է ավելի կուսակցու-թիւններ, ներառեալ նախ-կին խորհրդային Միութե-նէն ժառանգ կուսակցու-թիւններն ու Սփիւռքի կու-սակցութիւնները։


Դարձեալ կեդրոնաւա-րով քաղաքական կուսակ-ցութիւններու նիւթին վը-րայ՝ Լիպարիտեան յայտ-նեց, թէ Հայաստանի մէջ յասօր գործող որեւէ կու-սակցութիւն պէտք է պա-տասխան տայ երկու հիմ-նական հարցերու։

1.- Ի՞նչ է կուսակցու-թեան տեսլականը։

2.- Ի՞նչ պիտի ըլլայ կու-սակցութեան գործնական մօտեցումը անմիջկան հարցերու նկատմամբ։

Ան յատուկ ակնարկու-թիւն մը ըրաւ նաեւ ժամա-նակավրէյ դարձած քա-ղաքական ուժերու մասին, յայտնելով «Անոնք, որոնք ղէպբերու այս արագ ըն-թացքին կը պատասխանեն անցեալէն մնացած անդրա-դարձումներով, դատա-պարտուած են նահանջի մէջ մնալու»։

Անդրադառնալով Հա-րարադեան հիմնահարցին՝ Լիպարիտեան յայտնեց, թէ կողմերու միջեւ տարուող բանակցութիւնները յան-



ՍԵՒԱՆԱՅ ԼԻԺԻՆ ՀԱՐՑԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Հոկտեմբեր 13ին 16, Սեւանի մէջ տեղի պիտի ունե-նայ միջազգային գիտաժողով մը նուիրուած՝ Սեւանայ լիճի հիմնադրան հարցերուն, նախաձեռնութեամբ՝ ՄԱ-կի գարգացման ծրագրի եւ Հայաստանի ընապահպա-նութեան եւ ընդերքի նախարարութեան։

Ժողովին նպատակն է ներկայացնել տեղի ունեցա-ցիտական ուսումնասիրութիւնները, ինչպէս նաեւ այլ երկրներու մէջ լիճերու նկատմամբ կիրառուող քա-ղաքականութիւնը եւ քննարկել Սեւանի փրկութեան կարելիութիւնները։

Գիտաժողովին կազմակերպումին իրենց մասնակցու-թիւնը պիտի բերեն Հայաստանի մօտ Ֆրանսայի եւ Գեր-մանիոյ դեսպանատուները եւ Գեղաքունիքի մարզպե-տարանը։ Անոր աշխատանքին հրաւիրուած են Հայաս-տանի Ազգային Ժողովին, Հայաստանի կառավարու-թեան, ՄԱԿի քարտուղարութեան գարգացման եւ կա-ռավարման ծառայութիւններու բաժանմունքի, ԵՌԻ-ՆԵՄՔՈՅԻ, Համաշխարհային Դրամատուն, Հայաստանի մօտ հաւատարմագրուած դեսպանատուներու ներկա-յացուցիչները։

Ժողովին նախապատրաստական աշխատանքները ֆինանսուորուած են Համաշխարհային Դրամատուն կողմէ, որ տրամադրած է 40 հազար ամերիկեան տո-լար։ Այդ աշխատանքներուն մասնակցած են Գիտու-թիւններու Ազգային Ակադեմիայի եւ գիտահետազո-տական հիմնարկներու գիտնականներ եւ միջազգային փորձագէտներ։

ՎԱԶԳԷՆԻՆ ԿՈՐՈՒՍԵՐ (ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ)

Ճամբորդութենէ վերադարձիս, «Ազգակ»ի 21 Սեպտեմբերի թիւին մէջ լոյս տեսած Վազգէնին նկա-րը՝ նախքան վերնագիրը կարդալու, մտածել տուաւ, յաւն մը, թէ գիրքի մը հրատարակութեան առիթով հարցազրոյց մը, գրախօսական մը կրնայ ըլլալ, բայց նաեւ անմիջապէս նախազգացումը ունեցայ, թէ կըր-նայ մահուան առիւ գրութիւն մը ըլլալ։ Դժբախտա-բար վերջին մտածումս էր որ հիշդ դուրս ելաւ։

Վազգէնը հանգած եմ «Ահեկան»ի հանդիպումնե-րուն, որոնք տեղի կ'ունենային 1966 - 67 տարիե-րուն Համալսյի «Սայաթ Նովա» սրճարանին մէջ։ Սկաւախօս էր, սակայն երբ խօսք կ'առնէր իր տեսա-կետը յայտնելու համար, ուներ լուրջ դժուարութիւն իր միտքերը արտայայտելու։ Վը գգայի, որ այդ դըժ-ւարութիւնը կու գար մտածումներու եւ ապրումնե-րու անգնութենէ մը, լայն պաշարէ մը, որոնք ըն-թացիկ բաներով բանաձեւուելու դժուարութեան կը մատենէին զինք։ Կարծես թէ իր լեզուն, բերանը փոքր միջոց էին խորունկ եւ լայնածիր մտածումներն ու խոհերը դուրս բերելու...

Մենք բարեկամներ դարձանք մեր առաջին հան-դիպումներուն իսկ։ Իբր մարդ եւ բարեկամ դուլալ հոգի մը ուներ։ Բարեհամբոյր եւ միշտ ժպտուն, երբեմն չարաճնի եւ սրամիտ փայլ մը կը ստանային իր փոքր, սեւ աչքերը։ Չեմ յիշեր թէ այդ ժամանակ մ'օրուք ունէր։ Հետագային Պէյրութի գրական կեանքին մէջ Վազգէն ծանօթ դարձաւ իրեն տղայր կամ թիփի. իր սեւ եւ իւր մ'օրուքով, Նիկոլ Դումանը յիշեցնող։

Օր մը իմացայ, որ Քանադա մեկնած է ուսումը շարունակելու համար։ Ուրախացայ. մանաւանդ մտածելով, որ իրարու վրայ կուտակուած միտքերը, որոնք առատ եւ բազմախաղ էին. այլտի ստանային դասաւորուած ձեւ եւ պիտի արտայայտէր առանց դժուարութեան։ Այդպէս ալ եղաւ։ Տարիներ ետք իր վերադարձէն, Յակոբ Մանուկեանի գրական վաս-տակին նուիրուած երեկոյի մը ընթացքին, որուն հրա-ւիրուած էի Սակորին կողմէ, Վազգէն գլխաւոր խօսք առնողն էր։ Շատ յստակ դասաւորումով ներկայա-ցուց Մանուկեանի բանաստեղծութիւնը, ընելով իր-րունկ վերլուծում մը եւ գնահատական մը։ Իր դա-սախօսութիւնը գրած էր եւ կարդաց ամենայն յուսա-լութեամբ եւ պարզութեամբ։ Նիւթին կ'իշխէր եւ ուներ մեթոդի մ'օտեցում։

Այդ օրուրէն առիւն Վազգէն դարձաւ. գոնէ ինծի համար, կշռադատող, զուսպ, իր բաներուն տարու-ղութիւնը լաւապէս ըմբռնող. գրական եւ մտաւորա-կան ուժ մը, որ պիտի տար իր արգասիքը եւ հանդի-սանար մեր հանրութեան օգտակար եւ ինքնուրոյն մէկ անդամը։

Անկախ իր գրական հանաչողութենէն, իբրեւ իր-րաբան միտք, Վազգէն ուներ փուռնէն նոր ելած հպցիւ ճիւղերունը եւ ամէն զինք հանցցող կրկնը վստահիլ իր խօսքին եւ գուրգուրոտ անձին։ Իր բուխ

պիտը ան բաշխեց իր շրջապատին, հանրային կեան-քին եւ ընտանիքին։

Իր մահով կը կորսնցնէր թանկագին բարեկամ մը, գրաքննադատութեան եւ հայ լեզուի նուիրեալ մը, բայց մանաւանդ անփոխարինելի հոգի մը։ Յարգանք իր յիշատակին։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՈՒԱՆ ԵՐԱԺԵՏԱՆՈՅԸ

ԿԸ ԴԻՄԱԳՐԱԻՒ

ՆԻԻԹԱԿԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի տնօրէն Արմէն Սմբատեան յայտնեց, որ երաժշտանոցը կը դի-մա

Ամէնէն ուշագրաւը սակայն, Տնտեսական եւ Ընկերային Իրաւունքներու Կեդրոնի խորհրդական Սառա Լէյն Ուիթսըրի եռյոթնէն էր, որ շարք-պատասխանի հանդուանի նախօրեակին ոտքի ելլելով ուզեց Լիպարիտեանին փոխանցել Ա.Ի.Մ.-ի անդամ Արամազդ Զաքարեանի կողմէ Լիպարիտեանի դէմ յարուցած դատական հետազոյման թղթածրարը՝ Սակայն անմիջապէս ապահովութեան ուժեր վրայ հասնելով բռնի կերպով դուրս քշեցին Սառա Լէյն Ուիթսըրը ստեղծելով քաոսային մթնոլորտ մը։ Թէ՛ դատասօսը եւ թէ՛ ներկայները ցնցուած էին ստեղծուած կայուն թեննէն։

Յայտագրէն անմիջապէս ետք Հայ Երիտասարդական Դաշնակցութեան անդամ երիտասարդներու կողմէ ցոյց տր տեղի ունեցաւ որոնք բարձրացուած էին «ցեղծուած ըստ ըութիւններ Հայաստանի մէջ», «Այս է ժողովրդրայալութիւնը» վերտառութեամբ պատուանք։ Յստակ չէ, եթէ Լիպարիտեան դիմաւորուեցաւ ցուցարարներուն կողմէ, որովհետեւ դատախօսութեան աւարտէն անմիջապէս ետք եւ ներկաներուն սրահը լքելէ առաջ անարդէն ամերիկեան ապահովութեան ուժերու ներկայացուցիչներու կողմէ դուրս բերւած էր սրահէն։



ՅԱՌԱՋԻԿԱՅ ԱՄԻՍ

ԻՏԱԼԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՍԱՐԱԵՒՕ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Իտալիոյ ֆութպոլի ֆետերասիոնի մէկ պատասխանատուն շաբաթավերջից յայտնեց, թէ յառաջիկայ ամիս, Իտալիա ֆութպոլի բարեկամական մրցում մը պիտի կատարէ Պոսնիոյ դէմ, Սարաեւոյի մէջ:

Պատասխանատուն մրցումից թուականը չյայտնեց, բայց իտալական «Բորիերո Տելօ Սփոր» օրաթերթը ղատատեց, թէ մրցումը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 6ին:

Իտալիա պիտի ըլլայ առաջին ազգային խումբը, որ Պոսնիոյ մէջ պատերազմի ամարտէն ետք մրցում պիտի կատարէ Սարաեւոյի մէջ:

Պոսնիոյ ֆութպոլի ազգային խումբը անցեալ շաբաթ 4 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց խրոնաթիպէն, 1998ի Մոնտիալի գտումի մրցումի մը:

ԱՅԱԲՍԻ ՄԱՐԶԻՉ՝ ԼՈՒԻՍ ՎԱՆ ԿԱԱԼ ՊԻՏԻ ՀԵՌԱՆԱՅ ԻՐ ՊԱՇՏՈՆԷՆ

Այաքս Ամսթերտամի մարզիչ Լուիս Վան Կաալ, որ 1991էն ի վեր պաշտօնի վրայ է, որոշած է ներկայացնել իր հրաժարականը:

«Պայմանագրութիւնս կ'աւարտի յառաջիկայ Մայիսին: Կ'ուզեմ փոխել խումբս եւ այլ մրցաշարքերու մասնակցել», ըսաւ Վան Կաալ, որ 1988էն ի վեր կը գործակցի Այաքսին հետ:

Վան Կաալ միշտ այլաւ յարաբերութիւններու մէջ եղած էր իր կազմին հետ եւ այդ իսկ պատճառով, ան ամիսներ առաջ յայտնեց իր հրաժարելու փափաքը:

Այաքս Եւրոպայի երեք բաժաններուն 52 մրցում կատարած է եւ միայն վեց անգամ պարտուած է: Խիստ եւ ինքզինք պարտադրող Վան Կաալով հետաքրքրուած է Պարսելոնա, որուն ներկայ մարզիչը՝ Պոպի Ռոպսոն յառաջիկայ տարեշրջանին պիտի ըլլայ թեքնիք պատասխանատու:



Լուիս Վան Կաալ

Վան Կաալ ֆուլթպոլիստի իր օրերուն, մաս կազմած է Այաքսի, Անվերսի, Թելսթաբի, Սփորթա Ռոթթերտամի եւ ԱՋ ԵՂ Ալքմարին:

Այաքսի նախագահ Սիբայէյ Վան Փրաակ յայտնեց, թէ ցարդ ոչ մէկ փոխարինողի մասին կը մտածէ:

ՕՐԼԱՆՏԱ ՍՈՒՆՈՋ ԶԱԶՈՐԴԵՑ ՍԵՋԱՐ ՄԱԹԻՐԱՆԱՅԻ

Փանամայի ֆուլթպոլի պատասխանատուներ յայտնեցին, թէ Օրլանտո Մոնոպ նշանակուեցաւ ազգային խումբի նոր մարզիչը:

Մոնոպ, որ մինչեւ այս ամսուան սկիզբը խումբին ֆիզիքի մարզիչն էր, եղաւ քոլումպիացի Սեզար Մաթիւրանայի յաջորդը որ իր արձանագրած ձախող արդիւնքներուն համար պաշտօնանկ եղաւ ֆետերասիոնի կողմէ:

Մոնոպ մինչեւ յառաջիկայ Նոյեմբեր 15 պիտի ըլլայ ազգային խումբի մարզիչը, այսինքն մինչեւ այն ատեն, երբ կեդրոնական եւ հիւսիսային Ամերիկայի կիսաւարտականի մրցումները վերջ կը գտնեն:

Փանամա 1998ի Մոնտիալի գտումի երեք մրցում կատարած է ցարդ, պարտուած է յաջորդաբար Քանաւա (3 - 1) եւ Քուպայն (3 - 1), իսկ երրորդ մրցումին 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրած է Սալվատորի հետ:

ԹՐԵՒՈՐ ՍԻՆՔԼԷՐ ԿՈՒԶԷ ԼՔԵԼ ՔՈՒԻՆԶ ՓԱՐՔ ՌԷՅՆՃԵՐԶԸ

Յառաջիկայ ամիս, Քուինզ փարք Ռէյնճըրգի պատասխանատուները բացառիկ նիստ մը պիտի գումարեն, վերջնականապէս յստակացնելու համար յառաջապահ Թրեւոր Սինքլէրի հարցը: Ան կ'ուզէ լքել իր ակումբը:

Անգլիոյ ազգային խումբի 21 տարեկանէն վար կրտսերներու նախկին մարզիչը՝ Սինքլէր, շուրջ 2 շաբաթ առաջ Ռէյնճըրգի նախագահին Քրիս Ռայթի յայտնած էր իր առնելիք քայլը, սակայն վերջինը ըսած էր, թէ ինք առանձինն որոշում չի կրնար տայ, այլ խումբին պատասխանատուներին:

ՄԱՔԿՐԱԹ Ի ՎԵՐՋՈՅ ՓՈԽԱՆՑՈՒԵՑԱԻ

Այիրցի միջազգային յետապահ Փոյ Մաքկրաթի վերջից համաձայնութիւն գոյացուց իր կազմին՝ Ասթոն Վիլյային հետ եւ ատու:

րագրեց բարձրագոյն դասակարգի այլ կազմի մը՝ Տերալի Քուինթիի տոմարներուն վրայ:

38 տարեկան Մաքկրաթ, որ նախապէս փայլած էր Մանչեսթր Եունայթեդի հետ, վերջերս լաւ յարաբերութեան մէջ չէր Վիլյայի մարզիչ Պրայըն Լիթլիի հետ եւ իրրեւ պահեստի մարզիկ նկատի կ'առնուէր:

ՔԱՐՊՈՆԷ ՊԻՏԻ ՄԻԱՆԱՅ ԾԵՖԻԼՏ ՌԵՆՏՏԵՅԻ

Յապրիցիո Ռաւանելլին (Միտլոպոլիս), ձիանուէրա Վիալիէն (Զելսի) եւ Ռոպերթօ Տի Մաթէյայն (Զելսի) ետք, չորրորդ իտալացի մըն ալ՝ Պենիթօ Քարպոնէ պիտի միանայ Անգլիոյ ախոյեանութեան մրցաշարքին, կրելով Շեֆիլտ Ուենչտէյի չապիկը:

25 տարեկան Քարպոնէն անցեալ տարեշրջանին Նափոլիէն անցած էր Ինթէր Միլանին: Ան նախապէս մաս կը կազմէր Թորինոյին:

ՊՐՈԼԻՆ ԿԸ ՓԱՓԱՔԻ ՄՆԱԼ Ճ. Ք. ՅԻՐԻՒՆ

Հակառակ Լիոն Եունայթեդի մարզիչ Ճորճ Կրէյկի փափաքին, չուէտացի միջազգային յառաջապահ Թոմաս Պրոլին կը մերժէ վերադառնալ բրիտանական կազմին: Ան գոհ է իր ներկայ կազմէն՝ Ճ. Ք. Յիւրիէն եւ կը նախընտրէ իր ժամանակ մըն ալ մնալ Զուլիցերիս:

Լիոն երեք ամիս Ճ. Ք. Յիւրիէնի տրամադրած էր Պրոլին: Ըստ երեւոյթին, անոր յարաբերութիւնները լաւ չեն բրիտանական կազմին հետ, որ նոյնիսկ կը ծրագրէ բողոքել ՃիՖԱին եւ պատիժ առաջարկել:



Թրեւոր Սինքլէր

րուն հետ ժողովէ մը ետք կրնայ յայտարարել անոր «սակր» պիտի բարձրունքին որոշումը:

Թոթենհամ, Շեֆիլտ Ուենչտէյ, Պլէքպորն եւ Լիոն արդէն իսկ հետաքրքրուած են Սինքլէրով, բայց այնպէս կը թուի, թէ Ռայթ կ'ուզէ իր մօտ պահել այս մարզիչը:

Թոթենհամի մարզիչ Ճերի Ֆրենսիս, որ Քուինզ փարք Ռէյնճըրգի հետ իր օրերուն իր կազմին միացուցած էր Սինքլէրը (Պլէքպորն), յայտնեց թէ պատրաստ է 4 միլիոն տոլար վճարելու անոր փոխանցման համար:

Ռէյնճըրգ կը հաւատայ, որ երբ Լիոն եւ Շեֆիլտ Ուենչտէյ սկսին

ԼՈՊԱՆՈՎՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ՏԻՆԱՄՕ ԲԻԵԻ

Նախկին Խորհրդային Միութեան ազգային խումբին մարզիչը՝ Վալերի Լոպանովսքի, որ քսան տարի առաջ Տինամօ Քիւելի հետ շահած էր Եւրոպայի բաժանակիր խումբերու բաժակը, վերադարձած է Ուքրանիոյ մայրաքաղաքը, իր նախկին կազմը մարզելու, այս անգամ Ուքրանիոյ ախոյեանութեան մրցումներուն համար:

1993ին Քիւելի կազմը փորձած էր ունենալ Լոպանովսքին, որ այդ օրերուն կը մարզէր Քուէյթի ազգային խումբը:

57 տարեկան Լոպանովսքի Տինամօ Քիւելին հետ շահած էր Եւրոպայի բաժանակիր խումբերու բաժակը 1975ին: 1986ին, յաջողութիւնը կրկնուած էր:

Խորհրդային Միութեան ախոյեանութիւնը 13 անգամ, իսկ բաժակը ինը անգամ շահած Տինամօ այժմ Ուքրանիոյ ախոյեանութեան մրցումներուն կորսնցուցած է իր փայլքը:

Անցեալ տարի Տինամօ Քիւել երեք տարի կախակալուած էր, ախոյեան խումբերու բաժակին գծով, Փանաթինաքոսի դէմ մրցումին գեղծարարութիւն կատարած ըլլալուն պատճառով: Յետոյ, պատիժը նուազեցաւ եւ վերածուեցաւ մէկ ամսուան:

ՊԼԻՆՏ ՍԻՆՉԵՒ ՏԱՐԵՎԵՐԶ ՊԻՏԻ ԲԱՅԱՎԱՅԻ

Այաքս Ամսթերտամի խմբապետ Տանի Պլինտ ոտքի վիրաբուժութեան պիտի ենթարկուի յառաջիկայ Ուրբաթ եւ մինչեւ տարեվերջ հեռու պիտի մնայ դաշտերէն:

Այաքսի հետ 35 տարեկան Պլինտի պայմանագրութիւնը կ'աւարտի այս տարի եւ հաւանական է, որ ան չերկարաձգէ համաձայնագիրը:

Պլինտ շրջան մը վիրաւոր էր եւ խումբը կարիքը կը գցար յաւելեալ ուժերու: Հոլանտայի թէ Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն, Այաքս յաջող արդիւնքներ չ'արձանագրեր եւ ըստ երեւոյթին, նորակաւույց դաշտը՝ «Արենա»ն իրախտաբեր չ'է եղած խումբին:

ԼԱՒԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՍԸ ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

POLYGLOT

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԲԱՐՁՐ. ՎԱՐՃԱՐԱՆ (ՏՈՐԱ, ՀԵՌ. 881452 ԵՒ 894923)

ԶԵՋԻ Կ'ԸՆԾԱՅԷ ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

- Համակարգիչի դասընթացք:
- Անետրական ճիւղեր:
- Քարտուղարական դասընթացք:
- Ներքին յարաբար (ինթերիւր տիպայն):
- Մանկապարտիկ պատմութիւն:
- Հագուստի սթիլիս:
- Դէմքի շպարում (մաքիյա):

Տը եւ տնօրէն ՊԵՏՐՈՍ ՇԵՄԵՄԵՆ

ԷՐԻՔ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՇԱՊԻԿՈՎ



Ասատուրեան

Տպաւորիչ է առաջին անգամ ըլլալով կրել ազգային խումբին շապիկը եւ նշանակել կոլ մըն ալ: Այդ է, որ պատահեցաւ ֆրանսահայ Էրիք Ասատուրեանի:

Ան Պելֆաթի մէջ, Իրլանտայի (1 - 1) դէմ մրցումին իր կապմին կոլը նշանակեց:

Ասատուրեան իր կապմին՝ Կենկանի հետ լաւ յարաբերութիւններու մէջ չ'է եւ կրնայ այլ խումբի մը փոխանցուիլ:

Հայաստանի ազգային խումբին միւս ֆրանսացիին՝ Միշէլ Տէր Զաքարեանի բաղդատմամբ.

Ասատուրեան ծնած չ'է Երեւան եւ հայերէն չի գիտեր: Ան Ֆրանսա հաստատուած ընտանիքի մը զաւակն է եւ ծնած է Փարիզ:

Երկու մարդիկներն ալ ներկայ էին Հայաստան - Գերմանիա (1 - 5) մրցումին: Տէր Զաքարեան մէկ անգամ հարուածեց մրցակից կապմին բերդին սիւնին:

ՀԵՍԼԸՐԻ ՆՈՒԷՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ



Թոմաս Հեսլըր

Մոնտիալի գտումի Հայաստան - Գերմանիա (1 - 5) մրցումին, հակառակ երկու կոյրեր նշանակելուն եւ հայկական կազմին պատուհասը դառնալուն, Թոմաս Հեսլըր Երեւանէն նուէրներով վերադարձաւ: Անոնք տրամադրուած էին Հայաստանի ֆետերասիոնի կողմէ: Նուէրները՝ երկու շիշ քոնիաք եւ հայկական գորգ մը:

«Սիւփըր Հեսլըր» գրած էր «Պիլտ» թերթը՝ Հինգչարթի օրուան թիւով, անոր բացառիկ մրցումին մասին: Մանթի է, որ Հեսլըր ազատ հարուածներով 2 գեղեցիկ կոլ նշանակած էր:

30 տարեկան Հեսլըր Եւրօ 96էն ետք մտադրած էր լքել ֆուլթպոլը: Երբ ան 77րդ վայրկեանին փոխարինուեցաւ, հանդիսատեսները ծափահարեցին զինք:

«Բացառիկ էր Հեսլըր: Փաստեց, թէ ան կը մնայ մեծ կարողութիւններու տէր մարզիկ մը», ըսաւ ազգային խումբին մարզիչ Պերթի Ֆոկց:

ՎԱՐՁՈՒ ԿԱԶՄԱՌԱՎՈՐՈՒՄ
ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԱԶՄԱՌԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅ ԳԻՐՔԻ
18-ԲԳ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍ

Մինչև **40%**
ԶԵՂԶ ՎԱՃԱՌՔ
19 և 20 Հոկտեմբեր 1996

ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ,
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ, ԾԻՐԱԿ, ՍԵՒԱՆ,
ԿԻՐԱԿՆՍՐԵԱՅ, ԳԱՌՆԻ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ
Հրատարակչատունները:

Սիրով կը հրապարակենք ձեզ ՀԱՅ ԳԻՐՔԻ 18րդ ցուցահանդեսին, Շաբաթ 19 և Կիրակի 20 Հոկտեմբեր 1996, Անրիխասի Մալաթյանի մէջ:

Շաբաթ ժամը 5:30ին՝ երեկոյեան
ժամերգութիւն, 6:00ին՝ ցուցահանդէսի
պաշտօնական բացում եւ Հայրապետական
պատգամ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ.
ԱՌԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

*Մանօր.- Գիրքերը պիտի վաճառուին
մինչեւ 40% գեղջով*

ՎԱՐՁՈՒ ԿԱԶՄԱՌԱՎՈՐՈՒՄ
ՑԱՐԿԱԲԱԺԻՆ

●Ջալալի մէջ, 3 մնա-
սեւեակ, հիւրասրահ եւ ճա-
շարահ, հեռաձայնով միա-
սին: Հեռ. 260494 եւ 264267:

Կ'ՈՒԶՈՒԻ

●«BOUTIQUE MIKE»-ի
համար ծախող օրիորդ մը:
Հեռ. 260494 եւ 264267:

ԾԱԽՈՒ ԿԱԶՄԱՌԱՎՈՐՈՒՄ
ԿԱՄ ՎԱՐՁՈՒ ՏԱՄԱՆՈՎ

●Ժէլ Էլ-Տիպի կեդրոն,
150 քառ. մետր տարածու-
թիւն, «PICADOR» վաճա-
ռատունը: Դիմել՝ անձամբ:

Կ'ՈՒԶՈՒԻ

●Հաշտապահ մը՝ օտար
երկրի մը մէջ աշխատելու
համար, 4 տարուան փոր-
ձառութեամբ: Դիմել՝ հեռ. 03-719620:

ԾԱԽՈՒ ՏԸԼԻԻՔՍ
ՑԱՐԿԱԲԱԺԻՆ

●Ժէլ Էլ Տիպի մէջ, Հար-
պոյեան 2էն, 31.00 Ա.,
210 քառ. մետր տարածու-
թիւն: Օժտուած՝ էր-քոն-
տրոլիւնով, ջեռուցիչով, ժե-
ներաթէօրով, վերելակով եւ
կառատուողով: Հեռ. 03-
269091:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

●Բոլոր միւթեր՝ միջնա-
կարգի դասարաններու հա-
մար: Հեռ. 582080, ուղել՝
պրն. Սազոն:

ԽՆԴԻ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)
Երկ, մնա՛ւ հանդարտ եւ խաղաղ, աշխատանքի մէջ կամ
սուրճ, պիտի կարենա՛ւ լուծու՛մ մը գտնել ձեր կարեւոր
մէկ հարցին: Եղև լուսամբը:

ՑՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)
Երկ, դու՛ Բժիշկ մնա՛ւ կծկուած կամ կողմնակի, պիտի
յաջողի՛ շրջանցել կարեւոր խնդիր մը. ուրեմն եղև խա-
ղաղ եւ անտարբեր, գէր՝ այսօր:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Ձղաքգոյութիւն մը կառնական է ձեր շուրջը. տեղը
եղև ձեր ջիղերուն: Անցողական հարցեր են: Նկատի մի
առնել, ձեր շուրջիներուն կեցումները:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)
Ձեր բնակարանը յարգարեւոյ փափա՛ւ մը պիտի ունե-
նա՛ւ: Կ'ուզէ՛ ինչպէս դուրս գալ ձեր ա շրջապատէն էլի
մը փոխուելու համար. բրէ՛ ձեր ու գտնի՛ պէս:

ԱՌԻԻՎ (24 Յուլիսին 23 Օգոստոս)
Երկ, կ'ուզէ՛, որ օրը ըլլայ արդիւնաբեր, մասնակցի
այն ծրագիրներուն մասին, գործ վերջերս մշակած էլի:
ճանաչել գտնել գործի վերածել:

ԿՈՑՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Ձաքմանակի է, օրը, լեցուն գեղեցիկ անակնկալներով,
որ ձեզի պիտի սաղի, փոխելու ձեր կեանքին ձեր՝ դրական
կերպով:

ԿԵԻՌԻ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)
Ուշադրութիւն. ձեր գործառնողին մէջ պիտի ախր,
շփոք կացութիւն: Փորձեցէ՛ իրերը անսին՝ աւել յատուկ:
Համբերութեամբ պիտի կարենա՛ւ դուրս գալ բոլոր գծու-
թիւններէն:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)
Անգուստ է, արմիւր կամ ջղայնակալ, երկ անսին՝ բէ,
ձեր ծրագիրները գործի չեն վերածուած: Սահմանափա-
կեցէ՛ օրուան ձեր պարտականութիւնները, որպէսզի բե-
րեւեալ ու հանդարտի՛:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Շաբաթ պիտի սկսի լուսնի ձեռքով, իսկ դու՛ որոշած է՛,
արդէն գիմարել բոլոր անսին կարգերուն: Յաջողու-
թիւններ պիտի արձանագրէ՛ այսօր:

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Ձեր կողմ գաղափարները այնքան ալ իրապաշտ չեն լուս-
նի, որ աւարա՛ւ ձեր ստանձնած պարտաւորութիւնները ու
աղա մտածել կողմերու մասին:

ԾՈՎԱՆՈՑ (21 Յունուարին 19 Փետրուար)
Երկ գծուարութիւններու պիտի գտնուի՛ կամ ձեր
ստանձնած պարտականութիւնները ծանր բոլին ձեզի,
մտածեցէ՛ րարեկամներու մասին, որոնք կրնան օգնել ձեզի:

ՋՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Մի ձեզի որ կախալիս ձեռնարկած ձեր մէկ աշխատանք
փախ քրքա՛ւր մը մէջ, գոր մոռցած է՛: Այդ գործը
սախաղական է, ինտուարտ աւարտեցէ՛ գայն լրջօրէն
աշխատելով:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲՈԼԵՃ

«ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԸ 21ՐԴ ԴԱՐՈՒ ՍԵՍԻՆ»

Բանախօս՝
ԴՈԿՏ. ՊԵՐՃ ՊԵՐՊԵՐՈՂԼՈՒ
(Նեւատալի Համալսարանի Ընկերաբանութեան
Ամպլիոնի Վարիչ)

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 16 Հոկտեմ-
բեր 1996, կէսօրուան ժամը 12ին, Հայկապ-
եան Համալսարանական Քոլէճի սրահին
մէջ, Ժեթիսուրի:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵԿ ԿԱՆԱԶԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲՈԼԵՃ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Բ. Կանաչեան» Երաժշտական Քոլէճի
արձանագրութիւնները կը շարունակուին
անէն օր կէսօրէ ետք ժամը 2էն 7, «Էւոն
Շանթ» Կեդրոնին մէջ:

Անթիլիասի մասնաճիւղի արձանագրու-
թիւնները տեղի կ'ունենան Հինգշաբթի եւ
Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 2էն 7, Հա-
մալսարանի Մեթոդական եւ Հայկ Արար-
եան Ճեմարանի մէջ:

Վերամուտ՝ 17 Հոկտեմբեր:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Հոկտեմբեր 1996, Գիւտ Խաչի
Կիրակի է:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին
մատաղցու ոչխար նուրբի կամ մասնակցիլ նիւ-
րական նուերով, իող բարի ըլլան կապ հաստատել
բաղականութեան քարտուղարութեան հետ: Հեռ.
646933/4:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

USI
AIR & SEA FREIGHT
PACKING — TRAVEL — INSURANCE

UNITED SERVICES INTERNATIONAL S.A.R.L.

NACCACHE STREET — CHARTOUNI BLDG
TEL 350550/1/2/3 — 341150/51 — 342800
P.O. BOX 11 4335 — BEIRUT — LEBANON
CABLE: LOSHSERV — TELEX 20949 LE

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՈՅԵՐՈՐ
ԱՊԱՆԿԱԳՐԵԱԼ ԾԱՐՈՐՈՒՄ ԵՒ ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆ,
ԴԵՊՈ ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ԿՈՐՄԵՐԸ,
ԻՆՉՂԷՍ ԱՄԵՐ ԾՊԱՆԱՐԱՅԻՆ ՏՈՄՍԵՐ

Կարճ ժամանակամիջոցի մէջ տիրապետեցէ՛ք
ՕՐԿ ՆՈՒԱԳԵԼՈՒ
Գաղտնիքին, շնորհիւ
ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆԻ
նոր մեթոտով դասընթացներուն
Արձանագրութեան համար հեռաձայնել
01-261696 եւ 03-250518:

Electronic Door Entry

The external panel for the CITY LINE ELECTRONIC DOOR ENTRY have a 2 YEAR WARRANTY backing their robustness and durability. An LED push button for illumination on name plates, metal push buttons and exceptional design. The panels can incorporate a panoramic name window to identify the building and a Memory keypad to open the door by means of a secret code.

VIDEO DOOR ENTRY telephones and monitors

The FERMAX ELECTRONIC DOOR ENTRY SYSTEM allows for standby power supply guaranteeing more than 500 operations and door opening. The standby power supply has a rapid recharge system.

GAS G. Ayanian & Sons
Տորա, Հեռ. 884914 — 403123 (միացեալ գիծեր)
Ժրմմէյգէ, Հեռ. 445396/098 Ֆախ 205187/682357

FERMAX Specialists in communications since 1949

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

ՓՄԵԹԸԱՅԻՐ	ՓԷՐ-ՔՈՆՏԻՍԻՈՆ
ՈՒՍԻՎԵՐ	ՓԼՈՒՍՏԻՍԵՐԵՆԱՅ
ՓԻՏԵՐ	ՓԱՅՈՎՓՈՒՆ
ՓԱՄԵՐԱ	ՓԱՅՐՈՒՄԵՆՅԱԼ
ՓԱՍԻՈ-ՔԱՍԵՐ	ՓՈՒՆԵՐ

ԵՒ ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՅԵՆԵՐ

Պորճ Համուտ — Զաղաքապետարանի հրապարակ,
հեռ. 281270, 266432, 581011, 583218, FAX 583219
Հրդ մուտք, Սանթր Պլանքոյէ՛: Կառատունը ապահովուած:

ՇԻՐԱԿ ՀԱՐԱՆԵԱՆ ՔԱՐԹԵՐ

ՍՏԱՐԻ ՀԱՐԱՆԵԱՆ ԲԼՈԿ ԴՈՒՐԵՆ ԿԱՍՈՒՆ
ՀՀ 449533 — 449529

ԼԵՀԱՆԴՐՈՒՆ ԳՈՒՆ ԻՇԽԱՆԵԱՆ (ՁՈՔԵՐ - ՊԼԱՌ)

Յարգե՛ք իր յա-
նապաշտութեան ու-
շաքրութեան կը
յանձնէ՛ք բարեո-
րագման պատճա-
ռով փոքր փակ է
մինչեւ 30 Հոկտեմ-
բեր 1996:

Բացման թու-
կանը կը ծանուցուի
հետագային:

ՀԻՄԱՆԱՆՈՑ ՄՈՒՏԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ՍՏԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԵՐ-ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՍԱՐԱՊԱՆԿԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏՃԻԼԻ մօլ

●ՆՈՒԱԶԱԳՈՅՆ սակերով
●ԱՌԱԵԼԱԳՈՅՆ խնամք
●Վճարման դիւրութիւններ

Հասցէ՝ Ազգային Խոր-
հուրդի շէնք, ԱՏՃԻԼԻ կից,
Հեռ. 263324

ԽԱԶԲԱՌ ԹԻՒ 3506
Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՑ

1. Ինքնասէր, եսամոլ:	1. Գոհարագար:
2. Ոտքով հարուած - Կրկնուած բաղաձայններ - Նախանձ:	2. Որոշուած գին - Աղ-րիւր (Հակ) - Մովաշուն:
3. Սարսափ - Կոշիկի կապ - Անձնական դերանուն:	3. Ձայնակից գիրք - Յուզական ածական:
4. Ժխտական մասնիկ - Միացուէր:	4. Գուրգուրոտ, հոգա-ծու:
5. Նախաձայնիկ - Եզրիկ - տաճակ օրաթերթ:	5. Գեղմ - Գէշ, վատ:
6. Պատրաստ - Մ. Փարաճան-եանի փոքրէն:	6. Ժագ - Կայթ (Հակ):
7. Ս. Գրային նահապետ - Յուզական ածական:	7. Զանկապատի ձո-դեր:
8. Իրերալալոյր տա-ռիւ - Ոտ, ծիւղ - Կրկնու-ած ձայնաւորներ:	8. Իրերալալոյր գի-րեր - Յուզական դիցար-նութեան մէջ սիրոյ աստուածը - Լծորդու-թիւն:
9. Եւրոպական գետ - Այրուրենէն - Համադասա-կան շողկապ:	9. Հիւանդութիւն (Հակ) - Շողկապ - Գրա-րար՝ հոս:
10. Արդի Խալիլի կեր-տիչներէն:	10. Բոլորտի, կողմնա-կի:

ԹԻՒ 3505

ԽԱԶԲԱՌԻՆ

ԼՈՒՇՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ս	Ե	Կ	Ա	Պ	Ե	Ս		
2	Դ	Է	Ց	Օ	Լ	Չ	Ի	Ա	
3	Պ	Ե	Կ	Ե	Ի	Չ	Ե		
4	Ս	Ա	Լ	Ս	Ե	Ո	Կ	Ս	
5	Ա	Ե	Լ	Ա	Լ	Ի	Ա	Լ	
6	Կ	Ա	Ս	Ա	Ս	Ա	Գ	Ա	
7	Ա	Ա	Լ	Լ	Ե	Ի	Ո		
8	Չ	Չ	Լ	Ա	Ս	Լ	Ս	Ի	
9	Ս	Ի	Ա	Լ	Լ	Ա	Լ	Ա	
10	Լ	Ա	Լ	Ա	Լ	Ա	Լ	Ա	

از وصال